Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ:

«ՍԱՐԱՏՈՎ» ՇՈԳԵՆԱՎԸ

Իրիկնամուտին պատուհաններից դուրս աղմկեց մայիսյան կարճ անձրևը: Պեպենոտ սպասյակը, որ թիթեղյա լամպի լույսի տակ խոհանոցում թեյ էր խմում, նայեց պատին տկտկացող ժամացույցին, վեր կացավ անշնորհք, ջանալով նոր սապոգները ճռճռացնել, մտավ մութ առանձնասենյակ, մոտեցավ բազմոցին.

— Ձերդ բարեծննդություն, ժամը տասն է…

Նա վախեցած բացեց աչքերը.

— Ի՞նչ: Տա՞սը: Չի կարող պատահել. . .

Երկու պատուհանն էլ բաց էին դեպի փողոց, խուլ փողոց՝ ամբողջապես այգիների մեջ, պատուհաններից ներս էր լցվում գարնանային խոնավության և բարդիների թարմ բուրմունքը: Նա, հոտառության այն սրությամբ, որ լինում է ջահել, պինդ քնից հետո, զգաց այդ բույրերն ու կայտառացած՝ ցած իջեցրեց բազմոցից ոտքերը.

— Լույսը վառիր ու շուտ գնա կառք բերելու: Գտիր ամենաարագավազը:

Ու գնաց շորերը փոխելու, լվացվելու, գլխին սառը ջուր լցրեց, օծանելիքով թրջեց ու սանրեց կարճ գանգուր մազերը, մի անգամ էլ նայեց իրեն հայելու մեջ. դեմքը թարմացած էր, աչքերը փայլում էին, ժամը մեկից մինչև վեցը նա ճաշում էր սպայական մի մեծ խմբի հետ, տանը քուն մտավ վայրկենապես, ինչպես լինում է մի քանի ժամ անընդհատ խմելուց, ծխելուց, ծիծաղելուց և խոսելուց հետո, սակայն հիմա իրեն հիանալի էր զգում: Սպասյակը նախասենյակում նրան մեկնեց սուրը, գլխարկը ու ամառային բարակ շինելը, բացեց շքամուտքի դուռը. նա թեթևորեն թռավ բաց կառքն ու մի քիչ խռպոտ ձայնով բղավեց.

— Գնացինք, արագ: Մի մանեթ օղու համար:

Ծառերի խիտ յուղափայլ կանաչի տակից առկայծում էր լապտերների պայծառ լույսը, թաց բարդիների բույրը թարմ էր, բայց և թունդ, ձին սլանում էր, պայտերի տակից կարմիր կայծեր հանելով: Ամեն ինչ սքանչելի էր՝ և՛ կանաչը, և՛ լապտերները, և՛ առաջիկա հանդիպումը, և՛ ծխախոտի բույրը, որ հաջողացրեց ծխել ճամփին: Եվ այդ ամենը հանգում

էր մի բանի՝ երջանիկ զգացողությանը պատրաստ լինելու ամեն ինչի: Օղի՞ն էր, բենեդիկտի՞նը, թուրքական ձևով սո՞ւրճը: Դատարկ բան է, պարզապես գարուն է և ամեն ինչ շատ լավ է…

Դուռը բացեց կարճահասակ, արտաքինից շատ անպատկառ սպասուհին՝ բարակ կրունկների վրա ճոճվելով: Շինելն արագ հանելով ու սուրն արձակելով, նա գլխարկը գցեց հայելու տակի սեղանիկին և մազերը կարգի բերելով, խթանները զնգզնգացնելով ներս մտավ ոչ մեծ, զարդասենյակի կահույքից նեղվածք սենյակ: Եվ անմիջապես ներս եկավ և կինը, նույնպես ճոճվելով առանց ետնամասի կոշիկի բարձր կրունկների վրա, որ հագել էր բոբիկ ոտքերին, վարդագույն կրունկները բաց. երկայնահասակ, գալարուն, նման մոխրագույն օձի իր նեղ և խայտաճամուկ տնայնազգեստով՝ երկար, մինչև ուսերը բաց կտրվածքի թևքերով: Երկարուկ էին և նրա մի քիչ շեղ աչքերը: Երկար գունատ ձեռքին ծխում էր ծխախոտը՝ երկար սաթե մուշտուկի մեջ:

Կնոջ ձախ ձեռքը համբուրելով, նա ձգվեց, իրար զարկելով կրունկները.

— Ներիր, ի սեր աստծու, ուշացա ոչ իմ մեղքով. . .

Կինը իր հասակի բարձրությունից նայեց նրա կարճ, մանրագանգուր մազերի թաց փայլին, նրա փայլփլող աչքերին, զգաց գինու հոտը.

— Վաղուց հայտնի մեղքով. . .

Եվ նստեց մետաքսե փափկաթոռակին, ձախ ձեռքով արմունկը բռնած, բարձր պահելով ծխախոտը, ոտքը ոտքին՝ ծնկից վերև բացելով տնայնազգեստի կողքի բացվածքը: Նա նստեց կնոջ դիմաց մետաքսե թիկնաթոռին, տաբատի գրպանից հանելով ծխախոտատուփը:

— Հասկանում ես, ինչ պատահեց…

— Հասկանում եմ, հասկանում եմ…

Նա արագ և վարժ վառեց ծխախոտը, վառվող լուցկին թափահարելով հանգցրեց և գցեց արևելյան ոճի մոխրամանի մեջ փափկաթոռակի կողքին դրված սեղանիկին, ավելի հարմար տեղավորվելով ու սովորական անհագ հիացմունքով նայելով կնոջ մերկ ծնկին տնայնազգեստի բացվածքից:

— Էհ, շատ լավ, չես ուզում լսել, պետք չէ. . . Այս երեկոյի ծրագիրը. ուզո՞ւմ ես գնալ Վաճառականական այգի: Այնտեղ այսօր ինչ-որ «ճապոնական գիշեր է», գիտես այն լապտերիկներով, բեմում գեյշաներով, «գեղեցկության համար առաջին մրցանակը ստացա. . . »:

Կինը գլուխն օրորեց.

— Ոչ մի ծրագիր: Այսօր ես տանն եմ մնում:

— Ինչպես կուզես: Դա էլ վատ չէ:

Կինը նայեց շուրջը:

— Սիրելիս, սա մեր վերջին հանդիպումն է:

— Նա ուրախ զարմացավ:

— Ինչպե՞ս թե վերջին:

— Հենց այդպես:

Նրա աչքերն ավելի ուրախ կայծկլտացին:

— Սպասիր, սպասիր, դա զվարճալի է:

— Ամենևին չեմ զվարճանում:

— Սքանչելի է: Եվ այնուամենայնիվ հետաքրքիր է իմանալ, թե ի՞նչ կնշանակի սույն հարցը: Էդ ինչ հանկարծ խելքիդ փչեց, ինչպես կասեր մեր վախմիստրը:

— Թե ինչ են ասում վախմիստրներն, ինձ չի հետաքրքրում: Եվ ես, ճիշտն ասած, այնքան էլ չեմ հասկանում, թե ինչու ես ուրախացել:

— Ուրախացել եմ, ինչպես միշտ քեզ տեսնելիս:

— Դա շատ սիրալիր է, բայց այս անգամ ոչ տեղին: Սակայն, գրողը տանի, ոչինչ չեմ կարողանում հասկանալ: Ի՞նչ է պատահել:

— Պատահել է այն, ինչ քեզ վաղուց արդեն պիտի ասած լինեի: Վերադառնում եմ նրա մոտ: Մեր բաժանումը սխալ էր:

— Տեր իմ: Դու լո՞ւրջ ես ասում:

— Միանգամայն լուրջ: Ես հանցավոր կերպով մեղավոր եմ նրա առջև: Սակայն նա պատրաստ է ամեն ինչ ներել և մոռանալ:

— Ինչպիսի՜ մեծահոգություն:

— Խեղկատակություն մի արա: Ես հանդիպում եմ նրան դեռ մեծ պասից. . .

— Այսինքն ինձնից թաքուն և շարունակելով. . .

— Ի՞նչ շարունակելով: Հասկանում եմ, բայց միևնույն է... Ես հանդիպել եմ նրա հետ և, իհարկե, գաղտնի,

չուզենալով հենց քեզ տառապանք պատճառել, և այդ ժամանակ էլ հասկացա, որ երբեք չեմ դադարել նրան սիրել:

Նա աչքերը կկոցեց, ծամելով ծխախոտի ծայրը:

— Այսինքն՝ նրա փողե՞րը:

— Նա քեզնից հարուստ չէ: Եվ ինչիս են պետք ձեր փողերը: Եթե ուզենայի…

— Ներիր, այդպես խոսում են միայն թեթևաբարո կանայք:

— Իսկ ե՞ս ով եմ: Ես, ինչ է, ի՞մ փողով եմ ապրում, քո փողերով չե՞մ ապրում:

Նա շշնջաց արագ, սպայական խոսվածքով.

— Սիրո մեջ փողը նշանակություն չունի:

— Բայց ես նրան եմ սիրում:

— Իսկ ես, ուրեմն, ժամանակավոր խաղալի՞ք էի միայն, ձանձրույթ փարատող և քեզ ձեռնտու պահողներից մե՞կը: Դու հիանալի գիտես, որ ամենևին զվարճալիք չէիր, ոչ էլ խաղալիք: Դեհ, այո, ես սիրուհի եմ, տղամարդու հաշվին ապրող, բայց այնուամենայնիվ ստորություն է այդ երեսովս տալ:

— Մտածեք ինչ եք ասում: Զգույշ եղեք ձեր արտահայտությունների մեջ, ինչպես ֆրանսիացիներն են ասում:

— Ձեզ էլ խորհուրդ կտայի այդ հիշել: Մի խոսքով. . .

Նա վեր կացավ, մեջն զգալով նոր ուժ՝ ամեն ինչի պատրաստ, ինչպես որ սլանում էր այստեղ կառքով, ետ ու առաջ արեց սենյակում, մտքերը ժողովելով, դեռևս չհավատալով կատարվածի անսպասելիությանը, անհեթեթությանը, որ խորտակել էր այդ գիշերվա հետ կապված նրա բոլոր երջանիկ հույսերը, ոտքով մի կողմ շպրտեց կարմիր սարաֆանով դեղնամազ տիկնիկին, որ ընկած էր գորգին, նորից նստեց թիկնաթոռին, ուղիղ նայեց կնոջը:

— Մի անգամ էլ եմ հարցնում՝ այս ամենը կատակ չէ՞:

Կինը, աչքերը փակելով, թափահարեց վաղուց հանգած ծխախոտը:

Նա մտածմունքի մեջ ընկավ, նորից ծխեց և նորից ծամծմեց մուշտուկը, հատ-հատ ասելով.

— Եվ ինչ, դու կարծում ես, որ ես հեշտ ու հանգիստ

նրան կտա՞մ քո այդ ձեռքերը, ոտքերը, որ նա կհամբուրի ահա այս ծունկը, որ երեկ համբուրում էի ես:

Կինը հոնքերը վեր քաշեց:

— Բայց ես համենայն դեպս իր չեմ, սիրելիս, որը կարելի է տալ կամ չտալ: Եվ ինչ իրավունքով. . .

Նա շտապով մոխրամանի մեջ դրեց ծխախոտը և կռանալով տաբատի ետևի գրպանից հանեց սոթլիկ, փոքրիկ, ծանր ատրճանակը, ձեռքի մեջ շուռումուռ տվեց.

— Ահա իմ իրավունքը:

Կինը խեթ նայեց նրան, ձանձրույթով քմծիծաղեց:

— Ես մելոդրամների սիրահար չեմ:

Եվ հանգիստ ձայն տվեց.

— Սոնյա, Պավել Սերգեևիչի շինելը բերեք:

— Ի-ի՞նչ:

— Ոչինչ: Դուք հարբած եք: Գնացեք:

— Դա ձեր վերջի՞ն խոսքն է:

— Վերջին:

Եվ վեր կացավ տեղից, ուղղելով զգեստի բացվածքը ծնկի վրա: Նա քայլեց դեպի կինը ուրախ վճռականությամբ:

— Տեսեք, որ դա իսկապես էլ ձեր վերջին խոսքը չդառնա:

— Հարբած դերասան,— ասաց կինը զզվանքով, և երկար մատներով ուղղելով ետևից մազերը, դուրս եկավ սենյակից: Նա այնպես պինդ բռնեց կնոջ բացված ուսը, որ սա ծռվեց ու արագ շրջվելով Է՛լ ավելի շեղացած աչքերով, ձեռքը բարձրարեց, որ խփի նրան: Նա ճարպկորեն խուսափեց հարվածից և չար ծամածռությամբ կրակեց:

Նույն տարվա դեկտեմբերին Կամավոր նավատորմիղի շոգենավ «Սարատովը» Հնդկական օվկիանոսով գնում էր Վլադիվոստոկ: Նավի առջևի տախտակամածին քաշած տաք ծածկի տակ, անշարժ տապի, շոգ կիսալույսի, ջրի հայելե արտացոլումների փայլի մեջ տախտակամածին նստել և պառկել էին մինչև գոտկատեղը մերկ կալանավորները՝ կիսով չափ թրաշած սարսափելի գլուխներով, սպիտակ վարտիքներով, բոբիկ ոտքերի կոճերից շղթայակապ: Բոլորի նման մինչև գոտկատեղը մերկ էր և նա՝ նիհար, արևայրուկից դարչնագույն մարմնով: Նրա էլ գլխի միայն կեսն էր մգացած կարճ խուզած մազերով, կոշտ մազերից կարմրասևին էին տալիս

վաղուց չսափրված նիհար այտերը, տենդագին փայլում էին աչքերը: Բազրիքին կռթնած, նա սևեռուն նայում էր խոր ցածում, բարձր նավակողի երկարությամբ ուռուցիկ բարձրացող ու գահավիժող թանձրակապույտ ալիքին և ժամանակ առ ժամանակ թքում վրան:

16 մայիսի 1944